## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/53 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **02 հուլիսի 2026թ.**

2026թ. հունիսի 22-ից հուլիսի 02-ը, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ պահեստամասերի ձեռքբերման **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/53** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ս. Մնացականյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» ծառայության պետ, |
| Գ. Մխիթարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» ծառայության պետի տեղակալ, |
| Ռ. Մնացականյան ՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Շարժասանդուղքների սպասարկման» ուղեմասի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Մնացականյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մեսնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ի, անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 22-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 15:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Շարժասանդուղքի մուտքահարթակի սանրիկ | - | Չկայացած | 175,000.00 |
| 2 | Շարժասանդուղքի մուտքահարթակի սանրիկ | - | Չկայացած | 175,000.00 |
| 3 | Շարժասանդուղքի մուտքահարթակի սանրիկ | - | Չկայացած | 175,000.00 |
| 4 | Մնացորդային հոսանքի ավտոմատ անջատիչ | 49500 | 23.06.2026 15:00 | 60,000.00 |
| 5 | Կոնտակտոր եռաֆազ | - | Չկայացած | 90,000.00 |
| 6 | Ավտոմատ անջատիչ եռաֆազ | 26500 | 23.06.2026 15:00 | 32,000.00 |
| 7 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ | 24500 | 23.06.2026 15:00 | 30,000.00 |
| 8 | Սնուցման բլոկ | - | Չկայացած | 40,000.00 |
| 9 | Հաղորդալար | 12000 | 23.06.2026 15:00 | 15,000.00 |
| 10 | Լուսադիոդային կետային լամպ, առաստաղի մեջ ներկառուցվող | 33333 | 23.06.2026 15:00 | 40,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. 1-3--րդ, 5-րդ, 8-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև Մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | Խուդյակով փ. /շ/70/ 9 Ավան 0060 Երևան Երևան Հայաստան, 044994899 | saro_adamyan_97@mail.ru | 26027339 |
| 2 | «Վարդմա» ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, Ազատության պող., 11Ա, բն. 49, 091216066 | vardma.llc@gmail.com | 08263255 |

2026թ. հունիսի 23-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ **«Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ-ի,** ում ում կողմից 4-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթերում «ֆիրմային անվանումը», «ապրանքային նշանը», «մակնիշը», «արտադրողի անվանումը» դաշտերում լրացված է համապատասխան չափաբաժինների անվանումները, որը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և անհրաժեշտ է հստակեցնել: Միաժամանակ «տեխնիկական բնութագրից» դաշտում.

4-րդ չափաբաժնի մասով առաջարկվել է՝ «Մնացորդային հոսանքի ավտոմատ անջատիչ», իսկ Ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ «Մնացորդային հոսանքի ավտոմատ անջատիչ УЗО 25Ա, արտահոսքի հոսանքը 30mA: Երկբևեռ 2P, 6 кA: Անվանական հոսանքը 25 Ա: Անվանական լարումը 220/230 Վ: Հաճախականությունը 50/60 Հց: Մնացորդային հոսանքի սարքի դասը AC: Բևեռների քանակը՝ 2. Մոդուլային լայնությունը՝ 2: Պայմանական կարճ միացման գնահատված հոսանքը 6кA: Դիֆերենցիալ պաշտպանության մոդուլի տեսակը էլեկտրամեխանիկական: Պաշտպանության դասը IP20: Անվանական մեկուսացման լարումը Ui 660 Վ: Կոնտակտների դիրքի անկախ ցուցիչ: Սեփական էլեկտրաէներգիայի սպառում չունի և գործում է նույնիսկ չեզոքի վնասման դեպքում: Սարքի ֆունկցիոնալությունը և ճիշտ կապը ստուգելու համար TEST կոճակի առկայություն: Իրանի նյութը պլաստիկ: Մոնտաժման տեսակը DIN ձողի վրա: Տեսակը մոդուլային: Աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը մինուս 25-ից մինչև պլյուս 60 աստիճան Ցելսիուս: Քաշը 0.17 - 0.2 կգ: Բարձրությունը 69-80 մմ: Լայնությունը 35-40 մմ: Խորությունը 74-85 մմ: Պատվիրատուն կարող է պահանջել նմուշ:

Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Տեղափոխում ու բեռնաթափումը իրականացնում է մատակարարը:»

7-րդ չափաբաժնի մասով առաջարկվել է՝ «Ավտոմատ անջատիչ միաբևեռ», իսկ Ընթացակարգի հրավերով պահանջվել է «Ավտոմատ անջատիչ 25Ա, միաբևեռ: Աշխատանքային լարումը 220/230 Վ, 50/60 Հց: Հոսանքը 25 Ա, բևեռների քանակը 1: Տեսակը մոդուլային: Մոնտաժման եղանակը DIN ձողի վրա: Միացման տեսակը Պտուտակային: Իրանի նյութը պլաստիկ, պաշտպանության աստիճանը IP 20: Ընդհանուր չափերը, խորությունը 70-80 մմ, լայնություն, 18-20 մմ, բարձրություն՝ 80-85 մմ:

Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Տեղափոխում ու բեռնաթափումը իրականացնում է մատակարարը:»

9-րդ չափաբաժնի մասով առաջարկվել է՝ «Հաղորդալար», իսկ Ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ «Հաղորդալար 1 x 0.75 մմ2 միաջիղ, կլոր պրոֆիլով, պղնձե ճկուն, ջիղը բազմահաղորդալար 0.75մմ2 կտրվացքով, պոլիքլորվինիլիտային մեկուսացմամբ:

Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Տեղափոխում ու բեռնաթափումը իրականացնում է մատակարարը:»

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 23-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 4 | 1 | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | 60000 | 49500 | 20% | 59400 | 49500 | 20% | 59400 | X |
| 6 | 1 | «Վարդմա» ՍՊԸ | 32000 | 26666 | 20% | 31999 | 18000 | 20% | 21600 | X |
| 6 | 2 | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | 32000 | 26500 | 20% | 31800 | 19735 | 20% | 23682 | |
| 7 | 1 | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | 30000 | 24500 | 20% | 29400 | 22015 | 20% | 26418 | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 2 | «Վարդմա» ՍՊԸ | 30000 | 25000 | 20% | 30000 | 22260 | 20% | 26712 | |
| 9 | 1 | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | 15000 | 12000 | 20% | 14400 | 11030 | 20% | 13236 | X |
| 9 | 2 | «Վարդմա» ՍՊԸ | 15000 | 12500 | 20% | 15000 | 11150 | 20% | 13380 | |
| 10 | 1 | «Վարդմա» ՍՊԸ | 40000 | 33333 | 20% | 40000 | 32999 | 20% | 39598.8 | X |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 25-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 29-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հուլիսի 02-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 4-րդ, 7-րդ, 9-րդ | «Սարիբեկ Ադամյան» Ա/Ձ | բավարար |
| 6-րդ, 10-րդ | «Վարդմա» ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. հուլիսի 02-ին Հանձնաժողովը որոշեց, Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի, ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Հովհաննիսյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ի նախագծերը:

2026թ. հուլիսի 02-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ս. Մնացականյան ________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Մխիթարյան ________________

Ռ. Մնացականյան ________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Հովհաննիսյան ________________